## ՏԵՂԵԿԱՆՔ

### «ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

**Հոդված 1.** «Բանկային գաղտնիքի մասին» 1996 թվականի հոկտեմբերի 7-ի ՀՕ-80 օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. «Կատարողական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այդ օրենքով նախատեսված՝ Կենտրոնական բանկի խորհրդի՝ արդարադատության նախարարի հետ համաձայնեցված նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները հարկադիր կատարողին հասանելի դարձնելը չի համարվում բանկային գաղտնիքի հրապարակում:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:~~2025 թվականի հուլիսի 1-ից:~~